ԹԵՂՈՒՏԻ 2009 – 2010 ԹԹ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ

Վերջին տարիներին բուռն քննարկումներ են ընթանում ՀՀ Լոռու մարզի Շնող և Թեղուտ գյուղերի հարևանությամբ պղնձի ու մոլիբդենի հանքավայրի բացման և հարստացուցիչ կոմբինատի կառուցման առնչությամբ: Շուրջ 1500 հա տարածքում կան նաև տասնյակ գյուղատեղիներ, դամբարանադաշտեր, բրոնզեդարյան ամրոցներ, միջնադարյան գերեզմանոցներ և հնագիտական ու ճարտարապետական այլ հուշարձաններ: Հանքավայրը և նրա շահագործման հետ կապված տարածքները հնագիտորեն ուսումնասիրված չեն: Միայն այդ տարածքից հարավ-արևմուտք, Ղարաքոթուկ և Մեծ Ուրթատեղ սարերում հնագետ Վ. Ավետյանը 1972 և 1990 թթ. պեղել է միջին և ուշ բրոնզի դարաշրջանների շուրջ մեկ տասնյակ դամբարան[1]*:*

Դեռևս 2005 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում նախապատրաստական աշխատանքներ են տարվել հանքավայրի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության և ուսումնասիրության ուղղությամբ: Առաջնորդվելով տեղանքին քաջածանոթ հնագետ Վ. Ավետյանի կազմած «Լոռու մարզի Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքի հնագիտական հուշարձանների մասին» տեղեկանքով՝ 2009 թ. ինստիտուտի հնագիտական արշավախումբը սկսեց պեղումներ կատարել հանքավայրի իրացման գոտում[2]*:*

Շնող գետի ավազանը, որտեղ գտնվում է Դուքանաձորի հանքավայրը, սկսած քարեդարից, մեղմ կլիմայի ու բարեբեր հողերի շնորհիվ բնակեցված է եղել: Տարիներ շարունակ շինարարական, գյուղատնտեսական, հողահարթեցման և այլ բնույթի աշխատանքների ժամանակ տարբեր հանդամասերից հայտնաբերվել են հնագիտական բազմաթիվ գտածոներ, որոնց մի մասը պահվում է Շնողի համայնքային թանգարանում:

Պեղումներն սկսվեցին երեք հանդամասերում՝ Դուքանաձոր, Լորուտի հողեր *և* Բովեր*: Դուքանաձորը միջնադարյան գյուղատեղի է, գտնվում է*

---

[1] *Վ. Ավետյան. Շնող, Երևան, 1998, էջ 52-61:*

[2] *Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թ. «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասեր տրամադրելու մասին» որոշումը և ՀՀ մշակույթի նախարարի 2008 թ. հուլիսի 4-ի «Թեղուտի հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» հրամանը՝ 2009 թ. պայմանագիր կնքվեց «Թեղուտ» ՓԲԸ և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջև, ըստ որի, ընկերության ֆինանսավորմամբ ինստիտուտն իրականացնում է պեղումները:*

Շնողից 10 կմ հարավ, մինչև 1930-ական թվականները եղել է ձմեռանոց, որտեղ մշտապես բնակվել է Շնող գյուղի մոտ 20 ընտանիք:

Դուքանաձորի ջուր *գետակի ձախ ափին (բարձ. 980 մ), միջնադարյան գերեզմանոցից շուրջ 200 մ հարավ-արևելք, ձորամերձ հատվածում, նշմարվում էր թոնիր հիշեցնող կավե շինություն: Պեղումներով պարզվեց, որ դա 20 սմ հաստ պատերով ձուլարան է, որից պահպանվել էր միայն 1,6 մ բարձրություն և 1,3 մ լայնություն ունեցող մեկ հատված՝ խարամի 3 սմ հաստությամբ շերտով:*

2010 թ. այդ վայրից շուրջ 0,5 կմ արևելք՝ ճանապարհի և գետակի միջև, հողային աշխատանքների ժամանակ նկատվել էին պատեր ու խեցեղենի բեկորներ: Պեղվեց արևելք-արևմուտք կողմնորոշմամբ չորս դամբարան: Դրանցում հայտնաբերվեցին տարբեր խեցանոթներ և մեկ բրոնզե ապարանջան: Դրանց հարևանությամբ պեղվեց ևս մեկ հիմնահողային դամբարան, որը կառուցվածքով, թաղման ծեսով և գույքով էապես տարբերվում էր նախորդներից: Հայտնաբերված նյութերի քննությունը ցույց տվեց, որ դրանք տարբեր դարաշրջանների թաղումներ են: Առաջին չորս դամբարանները վերաբերում են մ. թ. ա. XII–XI դդ., իսկ վերջինը՝ մ. թ. ա. XVIII–XVII դդ.: Նույն տարածքում պեղվեց նաև 3,75 (3,2 մ չափերով մի շինություն (արտադրական կառույց), որի պատերի պահպանված բարձրությունը 0,9 մ է (նկ. 1): Շինության հարավարևմտյան անկյունում բացված հորի շրջակայքը պատված էր շիկակարմիր հողի շերտով: Քանի որ փայտածխի և մոխրի հետքեր չկային, պետք է ենթադրել, որ դա տնականորեն բարձր ջերմաստիճան ունեցող նյութերի, այս դեպքում, հավանաբար, հալված մետաղի հետ շփման արդյունք է:

Նկ. 1.
Դուքանաձոր. արտադրական կառույց

2010 թ. պեղումները եկան հաստատելու այն կարծիքը, որ Դուքանաձոր անվան հիմքում ընկած է դուքան-արհեստանոց բառը, որը ևս հուշում է այստեղ եղած մետաղամշակման արհեստանոցների մասին[3]*:*

Պեղումների հաջորդ տեղամասը Լորուտի հողերն *է, որը գտնվում է Թեղուտ գյուղից 0,5 կմ հյուսիս-արևմուտք, Շնող գետի ձախափնյա բարձրադիր լանջին:*

Դեռևս 2007 թ. այս տեղամասում սկսված ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ նկատվեցին ավերված դամբարաններ: Տարածքի գրեթե կենտրոնական մասում պեղվեց մ. թ. ա. VIII–VII դդ. 12 դամբարան: Դրանք թեք լանջին սփռված, արևելք-արևմուտք կողմնորոշմամբ փոքր, շախմատաձև դասավորված, 60–65 սմ խորությամբ ուղղանկյունաձև քարարկղեր են: Պատերը շարված են երկարավուն, հարթ

[3] *Գ. Շ ա խ կ յ ա ն. Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 128, Հայոց լեզվի բարբառային բառարան, խմբ. Ա. Սարգսյան, հ. Ա, Երևան, 2001, էջ 362:*

մակերեսով, ուղղահայաց դիրքով դրված գետաքարերից, ծածկված են 2–4 սալերով: Դրանց խորությունը գետնի այժմյան մակարդակից 1,1–1,5 մ է:

Տարածքի արևմտյան՝ բարձրադիր մասում (բարձ.՝ 752 մ), անմիջապես ճանապարհի եզրին նկատվեց կարասի շուրթ: Հետագա պեղումներով հայտնաբերվեց քարե կլոր կափարիչներով ծածկված յոթ կարաս, տաքար և թոնիր, որոնք բնորոշ են հայկական միջնադարյան հնձաններին: Կարասները դրսից պատված են 3 սմ հաստությամբ ամուր կրաշաղախով, իսկ դրանցից մեկին կրաշաղախով ամրացված են նաև կավանոթների խոշոր բեկորներ: Նման երևույթ հանդիպում է առաջին անգամ: Կարելի է ենթադրել, որ կարասները պատրաստվել են այլ նպատակով, և դա արվել է դրանց լրացուցիչ ամրություն տալու կամ գինու հասունացման ջերմային ռեժիմը կարգավորելու համար:

Հնձանի հյուսիսարևմտյան մասում բացվեց կրաշաղախով սվաղված տաքար (բերանի տրամագիծը՝ 0,48 մ, խորությունը՝ 1,25 մ)[4]: Դեպի ներքև այն լայնանում է, կենտրոնական մասում տրամագիծը 0, 73 մ է, իսկ հատակին՝ 0,95 մ:

Հայկական միջնադարյան տաքարները ունեցել են 500–5000 լիտր տարողություն: Դրանց մեջ լցնում էին քաղցուն կամ սև խաղողի տրորված զանգվածը[5]: Տաքարի հարևանությամբ բացվեց նաև թոնիր: Հայկական հնձաններին բնորոշ խաղողի տրորման հարթակ՝ առագաստ, չկար: Հնարավոր է, որ այն ունեցել է միակտոր գերանից փորված խաղողի տրորման ավազան (նավ), ինչպիսիք Հայաստանի հյուսիսարևելյան խաղողագործական շրջաններում օգտագործվել են մինչև XX դ. կեսերը (նկ. 2):



Նկ. 2.

ա. Լորուտի հողեր. հնձան բ. Լորուտի հողեր. հնձանի չափագրություն

Այս շինությունից 300 մ հյուսիս-արևելք, ճանապարհի կառուցման ժամանակ, ավերվել էր նման մեկ այլ կառույց, որից պահպանվել էր միայն կրաշաղախ առագաստի կամ ավազանի մի հատված:

---

[4] *Տաքար-հնձանում՝ առագաստի մոտ, կրով ու ավազով շինած, թոնրի նման մեծ հոր, որի մեջ թափվում է քաղցուն. տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասյանց, հ. IV, Երևան, 1945, էջ 393:*

[5] Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе. Вып. 6. Эриванская губерния. Тифлис, 1896, с. 89; *Կ. Կ. Մ է լ ի ք - Շ ա հ ն ա զ ա ր է ա ն ց. Ուղեցոյց գործնական գինեգործութեան, Տփխիս, 1885, էջ 18-19:*

Երրորդ հնձանը գտնվում էր նախորդից 100 մ հարավ (բարձ. 730 մ), հնավայրի կենտրոնական մասում: Մակերեսից 0,8 մ խորության մեջ պեղումներով բացվեցին բազալտով, ավազաքարով և գետաքարով շարված պատեր, որոնք ներսից ծեփված էին կրաշաղախով: Շինության երկարությունը 6,5 մ է, լայնությունը՝ 2,8 մ: Արևելյան՝ լանջին հարող պատի միջին հաստությունը մեկ մետր է, իսկ մյուսներինը՝ 0,6–0,8 մ: Շինության հատակն ու պատերի ներսը կրով ու ավազով սվաղված են, ներսի չափերն են՝ 4,9 (1,35 մ, պատերի բարձրությունը հյուսիսարևելյան մասում 1,4 մ է, իսկ հարավարևմտյան մասում՝ 1,18 մետր:

Ավազանի հարավարևելյան անկյունից 1,44 մ դեպի ներս, հատակի կրաշաղախի մեջ դրված է 1,1 մ երկարությամբ կավե խողովակ, որն անցնում է պատի տակով: Ներսի մասում խողովակի տրամագիծը 11, իսկ դրսում՝ 8 սմ է: Այն նախատեսված է եղել քաղցուն ավազանից հեռացնելու համար: Ավազանի արևելյան երկայնակի պատի մոտ արտաքուստ բացվեց մանր քարերով շարված տաքարը, որի կենտրոնը արևելյան պատից հեռու է 0,54 մ: Տաքարի շուրթի տրամագիծը 0,35 մ է, խորությունը՝ 1,42 մ:

Հետաքրքիր է, որ շուրջ 7 խմ ծավալով առագաստ-ավազանով հնձանն ուներ մոտ 500 լ տարողությամբ միայն մեկ տաքար, կարասներ չկային: Քանի որ այնտեղ հնարավոր էր կուտակել ստացված քաղցուի մոտավորապես տասներորդ մասը, պետք է ենթադրել, որ այն տեղափոխել են բնակավայր կամ պահեստավորել մոտակայքում գտնվող մառանում: Հնձանների շրջակայքում այլ շինությունների հետքերի բացակայությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն կառուցվել է բնակավայրից դուրս, այգու մեջ: Այս երևույթը բնորոշ էր միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր խաղողագործական շրջաններին (Արարատյան դաշտ, Վասպուրական, Տարոն, Արագածոտն, Վայոց ձոր, Արցախ, Տավուշ, Լոռի և այլն):

Նման առագաստ միջնադարյան համանման կառույցներում առայժմ հայտնի չէ:

Հայկական հնձանների առագաստներն ավանդաբար ծառայել են տորոլելու միջոցով քաղցուն խաղողից առանձնացնելու համար: Դրանք սովորաբար ունեցել են ոչ բարձր պատերով առագաստ, որտեղից քաղցուն կավե խողովակով կամ առվակով հոսել է գուբերի ու տաքարների մեջ: Մեր պեղած հնձանում, հավանաբար, գործ ունենք գինու ստացման մի այլ եղանակի հետ, որը ազգագրորեն փաստագրված է միայն Վայոց ձորի մարզում[6]: Նման չափերի ավազանում ակնհայտորեն խաղողը տորոլել, և նույն ավազանում քաղցուն տորոլված զանգվածի հետ թողել են, հավանաբար, 7–10 օր, որի ընթացքում խաղողի կեղևանյութի համային և գունային որակներն անցնում էին մաճառին: Քանի որ խաղողի սպիտակ տեսակներից նման եղանակով հնարավոր չէ գինի պատրաստել, պետք է ենթադրել, որ միջնադարում այս տարածքում մշակվել է սև խաղողի ինչ-որ տեսակ (նկ. 3):

[6] *Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Մարգսյան, Հ. Մելքոնյան, Ս. Հոբոսյան, Պ. Ավետիսյան. Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 252:*

Ըստ հայտնաբերված հնագիտական նյութերի, հնձանները վերաբերում են XIII–XIV դդ. (նկ. 3):

Լորուտի հողերի ամենաբարձր մասում պահպանվել են միջնադարյան գերեզմանոցը՝ ավերված շինության հետքերով, մեկ խաչքար՝ ՋԿԲ (1513) թվագրությամբ և խաչքարերի մի քանի տասնյակ պատվանդաններ:



Նկ. 3.

ա. Լորուտի հողեր. հնձանի ավազան բ. Լորուտի հողեր. հնձանի չափագրություն

Շինությունն ամբողջովին ավերված էր և պատված թփերով, նշմարվում էին միայն արևմտյան պատի հետքերը: Պեղումներով ներքուստ և արտաքուստ բացվեցին գետաքարերով և գրանիտով շարված հողաշաղախ շինության պատերը, որոնց հաստությունը 0,80–0,90 մ է, իսկ պահպանված մասերի բարձրությունը՝ 0,60–0,70 մ:

Պեղումներով հայտնաբերվել են ամբողջական և բեկորային խաչքարեր: ՌԾԳ (1604) թվագրությամբ խաչքարի բեկորի վերին մասում քանդակված են մարդու ֆիգուրներ: Ըստ գտածոների՝ շինությունը վերաբերում է XIV–XVI դդ. (նկ. 4):

Պեղումների հաջորդ տեղամասը Բովերն է, որը գտնվում է Շնողից յոթ կիլոմետր հարավ՝ Գուգութ լեռան արևելյան լանջին: Տեղանունն արդեն հուշում է, որ այստեղ էլ ինչ-որ ժամանակ մետաղ են ձուլել, որի համար հանքաքարը բովել են[7]: Այդ են վկայում նաև հանքախորշերի՝ «մաղարոնների» և մետաղաձուլական արհեստանոցների հետքերը[8]: Բովերի արևմտյան՝ բարձրադիր լանջին պեղվեց երկաթեդարյան 14 քարարկղ, հար և նման Լորուտի հողերի դամբարաններին: Տարածքը, ինչպես և շրջակա մնացած հանդամասերը, դարեր շարունակ մշակվել են, ուստի դրանց արտաքին նշանները չեն պահպանվել: Դամբարաններն ունեն արևելք-արևմուտք ուղղություն, խորությունը 0,5–1,8 մ է:

Երկրորդ դամբարանում գտնվեցին բրոնզե երեք, երկաթե մեկ ապարանջան և երկաթե դաշույն: Չորրորդ դամբարանում կար տարբեր չափերի վեց կավաման: Ննջեցյալի գանգը դրված էր հարավարևմտյան մասում.

---

[7] *Բ. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հ. 1, Երևան, 1958, էջ 132:*

[8] *Ե. Լալայան. Բորչալուի գավառ.– Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. VII-VIII, 1901, էջ 365, Գ. Շախկյան. Կայծոն-Շնող. հայրենագիտարան, Երևան, 1999, էջ 46:*

հավանաբար, թաղումը կատարված էր դիամասնատման ծեսով: Հինգերորդ դամբարանն ուներ քարե զրահ և ծածկված էր գրանիտե երկու սալերով, որոնք դրված էին խցի երկարությամբ: Փոքր խցում կար տասը տարբեր չափի կավանոթ: Վեցերորդ դամբարանի խուցը լցված էր մանր քարերով, որի հետևանքով կավամանները ջարդված էին: Խեցանոթների և կմախքի միջև քարերի այդ լիցքը ավելի հստակ էր և խիտ, կարծես դրանք առանձնացնող սահմանագիծ լինեին: Դամբարանի արևելյան մասում, ծածկասալերից մեկի տակ, ննջեցյալի ծնկոսկրի և սրունքի վրա հայտնաբերվեց երկու բրոնզե ապարանջան: Յոթերորդ դամբարանում ննջեցյալի խիստ քայքայված կմախքը դրված էր հարավային պատի երկարությամբ՝ գլուխը դեպի արևմուտք: Հյուսիսարևելյան անկյունում դրված էր երկաթե նիզակ:

ա. Լորուտի հողեր. եկեղեցի



բ. Լորուտի հողեր. եկեղեցու չափագրություն

Նկ. 4.

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թիվ 12 դամբարանը, որը բավական լավ էր պահպանված և ծածկված էր երկու սալով: Խցի չափերն են՝ 0,80 (0,63 մ: Ննջեցյալի գանգը գտնվում էր խցի արևմտյան մասում, բազկոսկրի վրա կար բրոնզե երկու ապարանջան: Հյուսիսային պատի տակ դրված էր չորս կավանոթ, խցի հատակին՝ երկու սալաքար: Հետագա պեղումներով պարզվեց, որ դրանցից 1,3 մ ներքև, անմիջապես խցի տակ առկա է համաժամանակյա, նույն ուղղությամբ մեկ այլ թաղում (1,42 (1,15 մ): Խցի հարավային պատը հիմնահողային էր: Ննջեցյալի կմախքը աջ կողքի վրա էր, կծկված վիճակում, գլուխը դեպի արևմուտք: Գլխի տակ սալ քար էր դրված: Խցի հարավային պատի տակ կար չորս, իսկ հյուսիսայինի տակ՝ մեկ կավանոթ:

Բովերում 2009 թ. պեղվեց նաև միջնադարյան եկեղեցին, որը Շնողի ամենահայտնի ուխտավայրերից է: Եկեղեցու անունը ժամանակին նույնացվել

է տեղանվան հետ, սակայն դեռևս հիշվում է, որ այն կոչվել է Սերգնի վանք[9]:

Բովերի եկեղեցին միանավ բազիլիկա է (8,8 (5,3 մ՝ արտաքին չափեր), պատերի հաստությունը մեկ մետր է, պահպանված մասերի բարձրությունը՝ 2,5–3,2 մ: Մուտքը հարավային կողմից է, դռան բացվածքը՝ 1,03 մ, բարձրությունը՝ 1,8 մ: Դռան բացվածքն արևմտյան պատից հեռու է 1,18 մ: Շինության արևելյան ցածրադիր մասում կա շուրջ 20 տապանաքար: Կրաշաղախ պատերը շարված են կոպիտ մշակված, երբեմն միայն ճեղքված քարերով: Պատերի որոշ հատվածներում կան բավական լավ մշակված մի քանի քարեր, որոնցից մեկը քանդակազարդ է և վերաբերում է VII–VIII դդ.: Եկեղեցին, դատելով շինարարական տեխնիկայից, հավանաբար, կառուցվել է XVII դ. վերջին կամ XVIII դ. սկզբին (նկ. 5):



Նկ. 5.
Բովեր. եկեղեցու չափագրություն

Պատերում առկա և պեղումներով հայտնաբերված վաղ շրջանի շինարարական տեխնիկային բնորոշ քարերը և եկեղեցու արևելյան ու հարավային կողմերի տապանաքարերը թույլ են տալիս ենթադրելու, որ այնտեղ եղել է X–XII դդ. կառույց:

Հացուտի (Ֆիրմի) *բաղեր հնավայրը գտնվում է Թեղուտ գյուղից 0,5 կմ հարավ, Շնող գետի ձախափնյա բարձրադիր հրվանդանի վրա: 2010 թ. այստեղ պեղվեց հարավ-արևելք – հյուսիս-արևմուտք կողմնորոշմամբ հելլենիստական դարաշրջանի սալարկղային և կարասային 18 դամբարան, որոնք դասավորված են շուրջ 30 մ երկար, 0,9 - 1 մ լայն և 0,5 մ բարձր*

[9] *Ե. Լալայանը հիշատակում է* Սեղուի վանք *ձևով, որը, հավանաբար, վրիպակ է (տե՛ս ԱՀ, էջ 365):*

պատի վրա (նկ. 6): Պատը հարավային կողմում կտրուկ ընդհատվում է՝ հասնելով հրվանդանի արևելյան եզրի զառիվայր կտրվածքին:

Նկ. 6.
Հացուտի բաղեր. դամբարանների ընդհանուր տեսքը

Գրեթե բոլոր դամբարաններում, ննջեցյալների կրծքավանդակի շրջանում կային երկաթե զենքեր, ինչպես նաև բրոնզե ու արծաթե ապարանջաններ, ականջօղեր, բոժոժներ, ուլունքներ և այլ զարդեր: Թիվ 5 և 17 դամբարաններում հայտնաբերվեց այդ դարաշրջանին բնորոշ կավե երեք միականթ սափոր (օյնոխոյա): Թիվ 10 դամբարանը կարասային թաղում է: Զարդարուն գոտիներով պատված կարասի բարձրությունը մեկ մետր է, լայնությունը՝ իրանի ամենաուռուցիկ մասում, 0,8 մ: Դրված էր հորիզոնական դիրքով: Ննջեցյալի գանգը գտնվում էր հատակի կողմում: Կմախքը դիամասնատված էր՝ բազկոսկրերին կային մեկական բրոնզե ապարանջաններ:

Այս դամբարանները վերաբերում են մ. թ. ա. I – մ. թ. I դարերին:

Նախնական դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ թաղումների այս կանոնակարգված շարքը կարող էր լինել ինչոր ծեսի հետ կապված մարդկային զոհաբերությունների արտահայտություն:

Հացուտի բաղեր *հնավայրում պեղվեց նաև այգու մուտքից շուրջ 200 մ հարավ, ճանապարհի ձախ մասում գտնվող աննշան թումբը, որն ուներ 120 քմ մակերես: Վերին հողաշերտը հեռացնելուց հետո երևացին գետաքարերով և գրանիտով շարված պատեր, որոնց հաստությունը մոտ երկու մետր է: Կառույցը հաստ միջնորմներով բաժանված էր չորս մասի: Առաջին բաժանմունքի հարավարևելյան անկյունում բացվեց 0,9 մ տրամագծով կավածեփ կլոր օջախ՝ փայտածխի մնացորդներով:*

Կարելի է ենթադրել, որ այստեղ բացվել է միջնադարյան արտադրական-արհեստագործական մի համալիր: Քանի որ Շնող և Թեղուտ գյուղերի այս տարածքները մետաղագործական ավանդական կենտրոններ են, հնարավոր է, որ այս կառույցն էլ է առնչվում արհեստագործության այդ ճյուղին:

Փիջուտը *գտնվում է Թեղուտից 1 կմ հարավ-արևմուտք՝* Զորիգեղի *և* Հացուտի բաղերի *հարևանությամբ, տարածքը շուրջ 5 հա է: Հողահարթեցման աշխատանքների պատճառով հուշարձանների վերգետնյա նշանները լիովին խաթարվել են: 2010 թ. հետախուզական պեղումներով հայտնաբերված քարեղարյան գործիքների և վաղբրոնզեդարյան խեցեղենի*

բեկորները հաստատեցին այն կարծիքը, որ Փիջուտը տարածաշրջանի հնագույն հուշարձաններից մեկն է[10]*:*

2010 թ. պեղումների հաջորդ տեղամասը Զորիգեղն *է: Այն Շնողի շրջակա գյուղատեղիներից մեկն է, գտնվում է գյուղից յոթ կիլոմետր հարավ՝ Շնող գետի ձախափնյա բարձրադիր հրվանդանի վրա:*

Զորիգեղում, հողային տարաբնույթ աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են խեցեղեն, մետաղե իրեր, քանդակազարդ քարաբեկորներ և այլն: Դրանց շարքում հիշատակելի է հատկապես 1970 թ. հողային աշխատանքների ժամանակ ավերված խաչանկարը, որի մի փոքր հատված պահպանվում է Շնողի համայնքային թանգարանում: Խաչանկարով շինությունն ունեցել է մոտ 12 մ լայնություն և նույնքան երկարություն[11]*: Հողային աշխատանքների ժամանակ գտնվել է նաև վաղ միջնադարյան քառաթև խաչքարի երեք քանդակազարդ բեկոր, որոնք պահվում են վերոնշյալ թանգարանում (նկ. 7):*

Նկ. 7.
Զորիգեղ. քառաթև խաչքարի բեկորներ

2010 թ. հետախուզական պեղումներ սկսվեցին Զորիգեղում՝ այգու կենտրոնական մասից դեպի արևելք, փոքր թեքությամբ լանջի վրա: Հողի վերին շերտը հեռացնելուց հետո պարզվեց, որ այստեղ ժամանակին գերեզմանոց է եղել, որը 1960-ական թվականներին հողահարթեցման աշխատանքների ժամանակ ավերվել է: Դրանք բավական խիտ դասավորված քրիստոնեական թաղումներ էին՝ կատարված մի քանի հորիզոններով, որոնք վերաբերում են տարբեր դարաշրջանների, վաղ միջնադարից մինչև XVI–XVII դդ.:

Ծեսի առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում վաղ միջնադարյան զույգ գերեզմանների միջև, դրանց գլխամասում և դրանցից մեկին կից երկու թաղումները: Որպես թաղման խցի կափարիչ օգտագործվել էր 0,44 մ երկարությամբ մեկ ամբողջական կոմինդր: Ընդամենը 0,5 մ երկարություն, 0,4 մ լայնություն և 0,2 մ բարձրություն ունեցող խցում վերաթաղվել էին ննջեցյալի ոսկորները: Ոտքի և ձեռքի ոսկորները դրված էին մանր քարերով պատված հատակին, իսկ դրանց վրա՝ կմախքի մնացած մասերն ու գանգի բեկորները:

Պեղման հրապարակի արևմտյան մասում բացվեց ուշ բրոնզի վաղ փուլի քարարկղային դամբարան՝ կառուցված գրանիտե և բազալտե խոշոր քարերով, հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանի կրոմլեխից պահպանվել էր միայն արևելյան մի փոքր հատվածը՝ քարարկղից 3,5 մ հեռավորության վրա: Որպես կրոմլեխի քար օգտագործվել էր մակույկաձև ջարդված աղորիք:

---

[10] *Վ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 51:*

[11] *Նույն տեղում, էջ 65:*

Շուրջ 1–1,5 մ խորության այս խառը շերտից հայտնաբերվեցին վաղբրոնզեդարյան զարդարուն խեցեղենի բեկորներ, կավե կրակարան, կենդանու արձանիկի մաս և այլն: Պեղավայրի հյուսիսային մասում՝ մոխրի հորի մեջ հայտնաբերվեց վաղբրոնզեդարյան եռականթ, տանձաձև մեծ սափոր (նկ. 8):

ա. Զորիգեղ. ծիսական սափոր

բ. Զորիգեղ. կրակարան

Նկ. 8.

Հիմնական պեղավայրից 15 մ հարավ, արևելք-արևմուտք ուղղությամբ, 0,6 մ լայնության և 40 մ երկարության հետախուզական խրամատ փորվեց, որտեղ 1,1 մ խորության մեջ նկատվեց մոխրաշերտ՝ խաթարված տարբեր դարաշրջանների թաղումներով: Այստեղ բացվեց վաղբրոնզեդարյան կլոր կացարանի մի հատված, որի հատակը գետնի մակերեսից խորն է 2,5 մ: Քարե պատերով կացարանը կառուցված է անմիջապես մոխրաշերտի վրա: Պատի պահպանված բարձրությունը 0,75 մ է, ունի քարերի հինգ շարք:

Թեղուտ. *2010 թ. Թեղուտ գյուղում կառուցվող մանկապարտեզի տարածքում պեղվեց վեց դամբարան: Դրանք գրանիտից շարված ուղղանկյունաձև սալարկղեր են, հյուսիս- հարավ կողմնորոշմամբ:*

Առաջին դամբարանում մարդու մնացորդներ չկային: Հայտնաբերվեցին երկու կավե թաս, բրոնզե մեկ ապարանջան և գնդաձև իրանով, կլորավուն երկու կանթերով, ծորակով անոթ: Ինչպես այս, այնպես էլ մյուս դամբարանների թաղման ծեսին բնորոշ էր այն, որ չափերով մեծ անոթները դրված էին խցի կենտրոնական մասում, հատակից ներքև, 25–28 սմ խորությամբ փորված փոսերում: Երկրորդ դամբարանում հայտնաբերվեցին կավե թասերի բեկորներ և բրոնզե երկու ապարանջան: Երրորդ դամբարանում խեցեղեն նյութերի հետ կային նաև գավազանի բրոնզե գլխիկ, երեք մատանի և մեկ ապարանջան: Չորրորդ դամբարանում ննջեցյալի կմախքը, կծկված վիճակում, դրված էր ձախ կողքի վրա, աջ դաստակին կար բրոնզե ապարանջան: Անմիջապես կմախքի տակ, հատակից 28 սմ խոր փորած փոսում դրված էր նեղ վզով սափոր: Հինգերորդ դամբարանում ննջեցյալի կմախքը, կծկված վիճակում, դրված էր ձախ կողքի վրա, գանգը դրված էր քրեղանի մեջ: Աջ ձեռքի վրա, որը դրված էր գանգի

տակ, կար երեք ապարանջան: Դրանց հետ կային նաև ուլունքներ և բրոնզե մեկ մախաթ: Արևելյան պատի երկարությամբ դրված էր հինգ կավանոթ: Վեցերորդ դամբարանը մյուսներից առանձնանում էր խցի հյուսիսային կողմում, 0,65 մ լայնությամբ արված մանր քարերի լիցքով, որը, հավանաբար, ուներ դրոմոսի (մուտք) նշանակություն: Դամբարանում կար չորս կավանոթ:

Այս դամբարանները վերաբերում են մ. թ. ա. X–IX դարերին:

Շեկ աղբյուր *հնավայրը գտնվում է Շնողից շուրջ մեկ կիլոմետր հարավ՝ Շնող գետի ձախափնյա բարձրադիր հրվանդանին: Պեղվեց չորս դամբարան: Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ դամբանախցերը հարավում պատ չունեն:*

Դամբարանների թաղման գույքը բավական հարուստ էր: Առաջին դամբարանի կենտրոնական մասում, հատակին դրված էր քրեղան, որում կային 45 սմ երկարությամբ, լավ պահպանված բրոնզե նիզակ, 32 սմ երկարությամբ դաշույն և 70 սմ երկարությամբ գոտի: Չորս կավանոթներից մեկն ունի տափակ լայն բերան, որի շուրջը խաչաձև դասավորված կանթեր կան՝ երկուսը գայլի ոճավորված գլուխ հիշեցնող ծորակներով:

Երկրորդ դամբարանում կար վեց կավանոթ, որոնցից մեկը նռան տեսքով սափոր է:

Երրորդ դամբարանում թաղման գույքը, հիմնականում կավանոթներ, դրված էին ննջեցյալի կմախքի տակ: Կենտրոնական մասում կար հինգ կավանոթ, իսկ հարավային պատի տակ, սուր ծայրը դեպի վեր, դրված էր երկաթե նիզակ:

Չորրորդ դամբարանում թաղումը կատարված էր դիամասնատմամբ. ննջեցյալի գանգը գտնվում էր անմիջապես մակերեսին մոտ, հարավային կողմում, 0,20 մ խորության մեջ, քրեղանի ու բռնակով սափորի միջև: Քրեղանի մեջ դրված էր մեկ թաս և գավաթ-ըմպանակ: Քրեղանի և գանգի վրայով, դամբարանի լայնությամբ դրված էր բրոնզե գոտի: Ննջեցյալի բազկոսկրին կար բրոնզե ապարանջան, իսկ մյուս ձեռքի մատերին՝ բրոնզե երկու մատանի: Գանգի և կավանոթների տակ, 0,70 մ խորությունում դրված էր քառականթ ծիսական կճուճ, կավե գավաթ-ըմպանակ, մեկ կանթով սափոր և հյուսիսային պատի տակ՝ մեկ կճուճ: Նույն պատի տակ, կենտրոնական մասում, դրված էր բրոնզե օղակ, երկու մուրճիկ և ունելի:

2009–2010 թթ. պեղումներով պարզվեց, որ Շնող և Թեղուտ գյուղերի շրջակա տարածքներում առկա են քարեդարյան, վաղբրոնզեդարյան, միջին բրոնզի, հելլենիստական և միջնադարյան հուշարձաններ: Բնակլիմայական բարենպաստ պայմանները (ծովի մակարդակից 600–1000 մ բարձր) հնարավորություն են տվել տնտեսական գործունեության ամենատարբեր ճյուղերի զարգացման համար: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն իրողությունը, որ բոլոր պեղավայրերում փաստագրվում են տարբեր դարաշրջանների մետաղամշակման հետքեր[12]: Բացահայտվեց, որ տարածքը հնուց ի վեր եղել է երկրագործական մշակույթի զարգացած կենտրոն, և տնտեսության ավանդական ճյուղերից են եղել, մասնավորապես,

[12] Геология Армянской ССР. VI. Металлические полезные ископаемые. Ереван, 1967, с. 294.

խաղողի մշակությունն ու գինեգործությունը: Այդ են վկայում Լորուտի հողեր և Բովեր հնավայրերի դամբարաններում հայտնաբերված գինու կավե ռիտոնները և միջնադարյան հնձանային կառույցները:

Մինչև 2009–2010 թթ. Շնող գյուղի շրջակա տարածքների պեղումները, Դեբեդի ավազանում վաղ բրոնզեդարյան հուշարձանները հայտնի էին հիմնականում պատահական գտածոներով (Ալավերդի, Ակներ, Շամլուղ, Շնող) և հետախուզական պեղումների նյութերով (Այրումի Շահլամա II և Շահլամա III հուշարձաններ),[13] պատահական գտածոներով՝ Արդվիից, Լորուտից, Ջուջևանից, Շնողից[14]: Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Զորիգեղ հուշարձանը, քանի որ Հայաստանի այս տարածաշրջանում առաջին անգամ կանոնավոր պեղումներով հայտնաբերվել է բավականին յուրահատուկ մի համալիր, որը Կուրարաքսյան հիմնական բնութագրերի նույնականության պարագայում ունի որոշակի առանձնահատկություններ:

Զորիգեղի հնավայրի խեցեղենի հետագա ուսումնասիրությունը հնարավորություն կտա հիմնավորելու Կուրարաքսյան նոր ենթահամալիրի գոյությունը: Հուշարձանը գտնվում է պղնձի հանքավայրերի գոտում, որի շահագործումը վաղ բրոնզի դարում փաստագրվում է մշակութային շերտում նաև մալախիտի և ազուրիտի գտածոներով, ուստի հետագա պեղումները կարող են կարևոր նպաստ բերել նաև Հայաստանի հանքարդյունաբերության և մետաղագործության պատմության համար, ուստի անհրաժեշտ է Զորիգեղում հետագայում ևս շարունակել համակարգված և լայնածավալ հետազոտությունները:

Հացուտի բաղերի հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտը նույնպես եզակի հուշարձան է, և Հայաստանի պատմության ու մշակույթի շատ հարցերի լուսաբանման համար նրա հետագա պեղումները կարող են կարևոր նշանակություն ունենալ:

Շնող և Թեղուտ գյուղերի շրջակա պեղումները դեռևս շատ անակնկալներ կարող են մատուցել, նպաստելով մեր ժողովրդի պատմության և մշակույթի առայժմ չբացահայտված էջերի լուսաբանմանը:

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ РАБОТ В ТЕХУТЕ В 2009–2010 гг.

СУРЕН ОБОСЯН

Р е з ю м е

В Лорийском марзе в окрестностях сел Шнох и Техут в связи с разработкой медных и молибденовых месторождений Дуканадзора еще в 2005 г. Институтом археологии и этнографии НАН РА были предприняты предварительные работы

[13] С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1976, с. 21.

[14] *Ս. Դ ն է ջ յ ա ն. Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Զորագետում, Երևան, 2001, էջ 10:*

по сохранению и исследованию исторических памятников, находящихся на данной территории. Раскопки осуществляются при финансовой поддержке ЗАО «Техут». Бассейн р. Шнох, где находится рудное месторождение Дуканадзор, благодаря мягкому климату и плодородным почвам было заселено еще с каменного века. На территории почти 1500 га находятся десятки поселений, могильников, крепостей бронзового века, средневековых кладбищ и пр. В 2009–2010 гг. в древнем поселении Дуканадзор, являвшемся традиционным центром металлургии, были раскопаны литейная мастерская с глиняными стенами 10-и см толщины, часть металлообрабатывающей мастерской и четыре погребения бронзового века. В местности Лорут раскопаны 12 погребений VIII–VII вв. до н. э., три давильни XIII–XIV вв. и церковь XIV–XVI вв. В древнем поселении Бовер раскопано 14 погребений VIII–VI вв. до н. э. и средневековая церковь. В местности Ацути (Фирми) багер, в 0,5 км к югу от с. Техут, раскопано 18 погребений эллинистического периода. В 2010 г. в древнем поселении Дзоригех, в 7 км к югу от с. Шнох, на левобережном возвышенном мысе реки Шнох были обнаружены культурные слои раннебронзового, среднебронзового, эллинистического и средневекового периодов. Раскопки в окрестностях Шноха и Техута могут принести еще много неожиданных открытий, способствующих пролить свет на неосвещенные страницы истории армянской культуры.

PRELIMINARY RESULTS OF ARCHAEOLOGICAL EXCAVATIONS IN TEGHUT IN 2009–2010

SUREN HOBOSSYAN

S u m m a r y

In 2005 preparation works were done at the Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of the Republic of Armenia in direction of investigation and preservation of archaeological sites connected with exploitation of Dukanadzor copper and molybdenum factory, near the villages of Shnogh and Teghut, Lori District of the Republic of Armenia. Due to good climatic and geographic conditions, the basin of the Shnogh river, where the Dukanadzor mining district is situated, had been inhabited since the Stone Age. On the area of nearly 1500 ha there are tens of settlements and cemeteries dealing especially with the period from the Bronze Age to medieval times. Archaeological excavations took place in the territory of the mining district during 2009–2010 by financial means of “Teghut” mining corporation. Particularly in the archaeologiocal site Dukanadzor, which was a traditional metallurgical centre, a clay furnace with 10 cm thick walls, a part of metallurgical workshop and four Bronze Age tombs were excavated. In the place named Loruti hogher 12 tombs of the 8th–7th centuries B.C., three wineries of the 13th–14th centuries A.D. and a church of the 14th–16th centuries were unearthed. In the place of Bover 14 tombs of the 8th–6th centuries B.C. and a medieval church were explored. In the locality of Hatsuti (Firmi bagher), 0,5 km to the south of Teghut, 18 tombs of hellenistic period were excavated. During 2010 in the place of Dzorigegh, 7 km to the south of Shnogh, on the left-bank cape of the Shnogh river, Early and Middle Bronze Age, as well as hellenistic and medieval cultural layers were uncovered. Archaeological sites around the villages of Shnogh and Teghut have a big potential to supply with essential information on ancient and medieval history of the Armenian people.